ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 13

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած ընդլայնված խորհրդակցության

27.05.2025թ. **ք.Վանաձոր**

Նիստը վարում էր Լոռու մարզպետ Ա.Ղազարյանը
Արձանագրում էր փաստաթղթաշրջանառության բաժնի պետ Ս.Մակարյանը

Մասնակցում էին
Կ.Աշրաֆյանը - գլխավոր քարտուղար
Ն.Թովմասյանը - մարզպետի խորհրդական
Հ.Հակոբյանը - մարզպետի օգնական
Ա.Շահբազյանը - մարզպետի օգնական
Կ.Ադամյանը, Մ.Դալլաքյանը, Ռ.Պողոսյանը, Ռ.Մարգարյանը, Մ.Խեչումյանը, Ա.Հակոբյանը, Ն.Բարիկյանը, Է.Հախվերդյանը, Ա.Բեջանյանը, Ա.Դեմիրչյանը, Գ.Բաղդասարյանը, Կ.Շեկոյանը- մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ

Օ ր ա կ ա ր գ ո ւ մ՝

1. **Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների և տրված հանձնարարականների վերաբերյալ հաշվետվություն**
   /զեկուցող Լոռու մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ/
2. **ԼՄԱ Անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնու-թյան հետ կապերի վարչության պետ Կ. Ադամյան**

Մարզպետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթների ժամանակացույցերի և մրցույթի համար դիմած քաղաքացիների թվի վերաբերյալ

3. **ԼՄԱ Գյուղատնտեսության և շրջակա միջավայրի վարչության պետ Ա. Թումանյան**

3.1 Մայիսի 13-ին Գյուլագարակ և Ալավերդի համայնքներում տեղացած կարկտահարության վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն:

3.2 ՀՀ պետական օժանդակության Բուսաբուծության աջակցության ծրագրի ընթացքը Լոռու մարզում:

4. **ԼՄԱ Իրավաբանական բաժնի պետի պարտականությունները կատարող Գ. Բաղդասարյան**

Տեղեկատվություն դատական գործերի վերաբերյալ:

5. Այլ հարցեր:

Ե լ ույ թ ու ն ե ց ա ն՝

1. ՀՀ Լոռու մարզպետ Ա.Ղազարյանը աշխատակազմին ներկայացրեց մարզպետի օգնականի պաշտոնում նշանակված Ալբերտ Շահբազյանին՝ շնորհավորելով նշանակման առիթով, մաղթեց՝ աշխատանքային հաջողություններ և բեղմնավոր աշխատանք:

Ա.Շահբազյանը շնորհակալություն հայտնեց վստահության համար, հայտնելով իր պատրաստակամությունը՝ մարզպետի աշխատակազմում թիմային աշխատանք իրականացնելու և տրված հանձնարարականները ու իր վրա դրված պարտականությունները պատշաճ կարգով իրականացնելու համար:

2. Մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ Ս.Մակարյանը, Մ.Դալլաքյանը, Մ.Խեչումյանը, Ա.Հակոբյանը ներկայացրեցին նախորդ շաբաթվա ընթացքում իրականացված աշխատանքների և տրված հանձնարարականների վերաբերյալ տեղեկատվություն:

3. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ Կ.Ադամյանը ներկայացրեց հայտարարված մրցույթների մասնակիցների և արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն:

4. Մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական հարցերի վարչության պետ Ռ.Պողոսյանը ներկայացրեց առողջապահության և սոցիալական ոլորտներում կատարված աշխատանքների և նախատեսված հանդիպումների և միջոցառումների վերաբերյալ տեղեկատվություն, մասնավորապես՝ ՀՀ Առողջապահության նախարարության կողմից մայիսի 29-ին և 30-ին նախատեսված անվճար դասընթացների և նախատեսված վերապատրաստումների, ինչպես նաև առողջապահական կազմակերպություններում հանդիպումների անցկացման վերաբերյալ:

5. Մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Ն.Բարիկյանը ներկայացրեց «Վերջին զանգի» միջոցառումների կազմակերպման և անցկացման վերաբերյալ, ինչպես նաև Վանաձորում անցկացվող «Դպրոցականների բասկետբոլի լիգայի» միջմարզային փուլի և «Վարչապետի գավաթ» սիրողական հեծանվավազքի մարզային առաջնության անցկացման հետ կապված հարցերի վերաբերյալ տեղեկատվություն:

6. Մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Ռ.Մարգարյանը ներկայացրեց ստորաբաժանման կողմից իրականացվող աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն, մասնավորապես՝ նշվեց, որ շինաշխատանքների մշտադիտարկում է իրականացվել 25 օբյեկտներում, որոնց ընթացքում տեսանելի թերություններ չեն հայտնաբերվել: Տեղեկացրեց նաև, որ արդեն իսկ 2025թ-ի համար հաստատված սուբվենցիոն ծրագրերի թիվը 36-ն է:

7. Մարզպետի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետի պարտականությունները կատարող Գ.Բաղդասարյանը ներկայացրեց ստորաբաժանման կողմից իրականացվող աշխատանքների վերաբերյալ, ինչպես նաև աշխատակազմի կողմից դատական գործընթացներում ներգրավման և մասնակցության մասին տեղեկատվություն:

8. Մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության գլխավոր մասնագետ Ա.Դեմիրչյանը ներկայացրեց ստորաբաժանման կողմից գյուղատնտեսության ոլորտում իրականացվող ծրագրերի,

մասնավորապես՝ «Բուսաբուծության աջակցության» պետական ծրագրի շահառուների վերաբերյալ տեղեկատվություն, հայտնեց, որ ներկա դրությամբ ծրագրից օգտվողների թիվը 704-ն է և դիմումների ընդունումը շարունակվում է: Ներկայացրեց նաև, որ ս. թ. մայիսին տեղացած կարկուտի հասցրած վնասների վերաբերյալ արձանագրությունները ամփոփվել և սահմանված կարգով ներկայացվել են ՆԳ նախարարություն:

9. Մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետի պարտականությունները կատարող Կ.Շեկոյանը ներկայացրեց ստորաբաժանման կողմից իրականացվող աշխատանքների և անելիքների վերաբերյալ տեղեկատվություն, մասնավորապես նշեց, որ հունիսի սկզբին նախատեսվում է «Հայաստան-Ֆրանսիա ապակենտրոնացված համագործակցության 5-րդ համաժողովի» և «Հայ-Ռուսական միջազգային ֆորումի» միջոցառումները և դրանց մասնակցության ձևաչափերը և քննարկման ենթակա թեմաների հարցերը:

10. Մարզպետը հանձնարարեց.

1. Մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետի պարտականությունները կատարող Կ.Շեկոյանին՝

1-օրյա ժամկետում ներկայացնել համապատասխան տեղեկատվություն և առաջարկություններ միջոցառումների մասնակցության ձևաչափի և ըստ թեմաների՝ քննարկման հարցերի ու մասնակիցների շրջանակի վերաբերյալ:

2. Մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին՝

2.1 Ի փոփոխումն Լոռու մարզպետի մոտ 20.05.2025թ-ին կայացած խորհրդակցության արձանագրության 3.4 կետի հանձնարարականի՝ ոլորտային զարգացման և աշխատանքային պլանները մինչև սահմանված ժամկետը ներկայացնել մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարին, կազմակերպել համատեղ քննարկումներ և այդ մասին ներկայացնել տեղեկատվություն:

2.2 Յուրաքանչյուր ուրբաթ օրվա վերջում հաջորդ շաբաթվա ընթացքում քննարկվելիք օրակարգային հարցերը ներկայացնել մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարին՝ օրակարգ ձևավորելու և վերջինիս կողմից այն մարզպետի հետ քննարկելու ու հաստատելու նպատակով:

3. Մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Ն. Բարիկյանին՝

Անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել մարզային ենթակայության ուսումնական հաստատությունների և նախադպրոցական ուսումնական հաստատությունների հաշվեկշռում գտնվող գույքի պահպանման և դրանց համար պատասխանատուներ նշանակելու ուղղությամբ, համապատասխան գրությունով դիմել ուսումնական հաստատությունների տնօրեններին և համայնքների ղեկավարներին, որպեսզի վերջիններս

օրենսդրությամբ սահմանված կարգով հրամաններով կամ իրավական ակտերով սահմանեն նշված գործառույթների և պատասխանատուների իրավասությունը:

4. Մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Ռ.Մարգարյանին՝

Իրականացնել ստուգայցեր և պարբերաբար ներկայացնել տեղեկատվություն 2022-2023թթ. ավարտված շինարարական օբյեկտների մշտադիտարկումների վերաբերյալ, որոնք գտնվում են երաշխիքային և հետերաշխիքային ժամկետների մեջ:

X

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ՝ Ա.ՂԱԶԱՐՅԱՆ

Արձ. Ս.Մակարյան
Հեռ. 0322 /4-32-99